

15.07. 2013 թ

գ. Արգինա

ՀՀ Արմավիրի մարզի Արգինա համայնքի ղեկավարի 2013 թ առաջին կիսամյակի աշխատանքային գործունեության վերաբերյալ.

Արգինա համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով ժողովին մասնակցում էին Հայաստանի Հ անրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ ՀԳՄՏԾ Բաժնի պետ Գոռ Հովհաննիսյանը, ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ, գյուղապետարանի աշխատակիցներ:

Նախագահությամբ համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանի Քարտուղարությամբ՝ աշխտակազմի քարտուղար Ս. Հարությունյանի Ձեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանը Հարգելի հյուրեր, Արգինա համայնքի բնակիչներ.

Թույլ տվեք Ձեր ուշադրությունը հրավիրել իմ՝ համայնքի ղեկավարի , գյուղապետարանի աշխատակազմի կողմից 2013թ առաջին կիսամյակում կատարած աշխատանքների մասին՝ ըստ համապատասխան բնագավառների.

Սոցիալական բնագավառում՝

Կառուցվել է դպրոցի գուգարանը, անասունների համար տեղադրվել է խմելաջրի երկաթյա խմոցներ, համայնքում պարբերաբար իրականացվում է փողոցների աղբաթափության աշխատանքներ, մասնակի վերանորոգվել են համայնքի ներսի փողոցները:

Մեծ շուքով կազմակերպվել և անցկացվել է համայնքի երեսունամյակին նվիրված տոնակատարությունը: Մանկապարտեզի բակում Մանուկների Բարեգործական Հիմնադրամի օգնությամբ կառուցվել է խաղահրապարակ:

Ոռոգման սեզոնին ընդառաջ մաքրվել և վերանորոգվել են ոռոգման ներքին փակ ցանցը, ինչպես նաև համայնքի դաշտերի ոռոգման կիսախողովակների ցանցը: Գյուղապետարանի կողմից ձեռք է բերվել և համայնքի տնամերձերի ոռոգման նպատակով կառուցվել է ոռոգման նոր ցանց:

Համայնքի բնակիչներին Պետության կողմից աջակցության ծրագրով գնվել և բաշխվել է էժան դիզելային վառելիք և ազոտական պարարտանյութ:

Ավագանու կողմից հաստատվել է մայիսի 17 – ի կարկտահարությունից տուժված հողօգտագործողներին պետ բյուջեից փոխհատուցում ստացողների ցուցակը, հողօգտագործողներին են բաշխվել ձմերուկի, արևածաղկի, վարունգի և եգիպտացորենի սերմեր :

Համայնքի մեկ ընտանիքի հատկացվել է 100.0 հազար դրամ միանվագ դրամական օգնություն՝ երեխայի դժբախտ դեպքի կապակցությամբ :

Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել և անցկացվել է ավագանու վեց նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են համայնքին հուզող բազմաբնույթ

նարցարկը արվել են որոշումներ և հեռախոսներով դրանց կատարմանը:
2013 թվականի առաջին կիսամյակում բյուջեի կատարողականը կազմում է
1. հոդի հարկ 2345.0 հազար դրամ, կամ ` 30.22 % , գույքահարկ 55.56 հազար
դրամ կամ 13.18 %:

Կազմակերպվել և անցկացվել են գարնանային գորակոչի աշխատանքները,
կազմվել են անասունների հունվարյան հաշվառման ցանքերի հաշվառման
մասին հաշվետվություններ:

Կազմվել և ավագանու հաստատման են ներկայացվել համայնքի հողային
հաշվեկշռի մասին հաշվետվությունը:

Արմավիրի մարզպետարան , ինչպես նաև տարբեր կազմակերպություններ
են ուղարկվել յոթանասունից ավելի տարաբնույթ գրություններ ,
հաշվետվություններ:

Մարզպետարանի ֆինանսական բաժին, ինչպես նաև հարկային տեսչություն և
սոցապ բաժիններ են ուղարկվել քսանից ավելի հաշվետվություններ, գրություններ:
Քաղաքացիներից ստացվել են քսանից ավելի տարբեր դիմումներ, որոնք ստացել
են իրենց դրական պատասխանները, ինչպես նաև տրամադրվել են
հարյուրքսանից ավելի տարբեր բնույթի տեղեկանքներ:

Համայնքի հիմնախնդիրներն են`

Համայնքի թիվ մեկ խնդիր է գյուղի խմելաջրի, ոռոգման ջրի ներքին փակ ցանցերի
անսխիթար վիճակը ,դրանք գտնվում են վթարային վիճակում, որի պատճառով
մեծ են ջրի կորուստները, այդ իսկ պատճառով ենթակա են փոփոխման և
վերանորոգման:

Համայնքը չունի մշակույթի տուն, գյուղապետարանի շենք, գազաֆիկացված չէ,
փողոցները գտնվում են անբարեկարգ վիճակում, հաճախակի կարկտահարու-
թյունները մեծ վնասներ են պատճառում գյուղատնտեսական արտադրությանը:
Գյուղից մեծ թիվ են կազմում արտագնա աշխատանքի մեկնողները:

Արգինա համայնքի ղեկավար



Մ. Գրիգորյան

Մ. Գրիգորյան

Ք Ա Ղ Վ Ա Օ Ք

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արզինա համայնքի
ղեկավարի հաշվետու ժողովի նիստի արձանագրությունից

15.07. 2013 թ

գ. Արզինա

Արզինա համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով:
Ժողովին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի ՏԻՄ ՀԳՄՏԾ Բաժնի պետ Գոռ Հովհաննիսյանը, , ավագանու
անդամներ, համայնքի բնակիչներ, գյուղապետարանի աշխատակիցներ:
Նախագահությամբ՝ համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանի
Քարտուղարությամբ՝ աշխատակազմի քարտուղար Ս. Հարությունյանի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Արզինա համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2013 թվականի առաջին
կիսամյակի գործունեության վերաբերյալ:

Լսեցին 1.- Արզինա համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2013 թվականի
առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ:

Արզինա համայնքի ընդհանուր ժողովը որոշում է՝

Արզինա համայնքի ղեկավարի 2013 թվականի առաջին կիսամյակի
գործունեությունը գնահատել բավարար:

Արզինա համայնքի ղեկավար  Մ. Գրիգորյան

